

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
Արայիկ Հարությունյան -ին

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ

Ավետիք Մեջլումյան -ից

ք. Երևան, Մարգարյան 1 նրբ., 4-րդ շ., բն. 37

հեռ.: 094889984

Էլ. հասցե: avetiq.mejlumyan@gmail.com

Հանրային քաղաքականության հնաստուում

պետական գրանցման համար: 211.171.805779

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ինձ ընդգրկել ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հանրային
խորհրդի կազմում:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.

1. Ամփոփ տեղեկանք՝ վերջին 2 տարում կազմակերպության ծավալած
գործունեության վերաբերյալ
2. Մոտիվացիոն նամակ
3. Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում ԿԳՆ գործունեության և
կրթության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

Դիմող՝ Ավետիք Մեջլումյան

< 25 > մայիսի 2018թ.



Հանրային քաղաքականության ինստիտուտ

Հակիրճ վերլուծություն

(Վերջին 3 տարիների ընթացքում ԿԳՆ գործունեության և կրթության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ)

Ստորև ներկայացված են ՀՔԻ կողմից վերջին տարիներին իրականացված հետազոտությունների արդյունքների հիման վրա ձևավորված եզրահանգումներն ու գնահատականները:

ՀՀ-ում դպրոցների օպտիմալացման գործընթացի մասնակցային մոնիտորինգ: Հետազոտության նպատակն էր՝ ՀՀ-ում դպրոցների օպտիմալացման գործընթացի մասնակցային մոնիտորինգ իրականացնելու միջոցով բացահայտել այդ գործընթացին բնորոշ էին մնախնդիրները և մշակել բարելավման առաջարկություններ: Հետազոտությունն իրականացվել է Երևանի և ՀՀ 3 մարզերի 6 դպրոցներում: Ձեկույցի շնորհանդեսն ու քննարկումը նախատեսված է իրականացնել 2018թ. հունիսի վերջին տասնօրյակում՝ ոլորտի ներկայացուցիչների, կառավարության անդամների, ինչպես նաև մամուլի ներկայացուցիչների մասնակցությամբ *(հետազոտությունն իրականացվել է Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի աջակցությամբ, 2017-2018թթ.):*

Հիմնական եզրահանգումներ

1. 2017թ. մայիսին Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) Կառավարության հերթական նիստում քննարկվեց քաղաքային դպրոցների օպտիմալացման հարցը: Դպրոցների օպտիմալացման անհրաժեշտությունը հիմնավորվում էր թերբեռնվածության և կրթության որակի հետ կապված խնդիրներով: Կրթության ոլորտի պատասխանատուների՝ Կառավարության նիստին հետևած հրապարակային ելույթներում նշվում էր, որ առաջիկայում միավորվելու են քաղաքներում գործող մինչև 300 աշակերտ ունեցող դպրոցները, իսկ հետագայում՝ նաև մինչև 450 աշակերտ ունեցող քաղաքային դպրոցները:

2. 2017թ. օգոստոսի 24-ի Կառավարության նիստում որոշումներ ընդունվեցին մայրաքաղաքի և մարզերի մի շարք դպրոցների վերակազմակերպման և այլ դպրոցների միացման մասին: Ի հակասություն մինչ այդ բարձրաձայնված սկզբունքների, վերակազմակերպված ուսումնական հաստատությունների շարքում կային գյուղական բնակավայրերում գործող դպրոցներ:

3. Դպրոցների վերակազմակերպման որոշումների մշակման գործընթացում աշակերտների, նրանց ծնողների և դպրոցի անձնակազմի կարծիքը չի քննարկվել կամ ուսումնասիրվել: Որևէ դպրոցում չի իրականացվել համակողմանի ուսումնասիրություն/գնահատում՝ պարզելու վերակազմակերպման նպատակահարմարությունը, սկզբունքները, պայմանները, հնարավոր հետևանքներն ու դրանց հաղթահարման ուղիները:

4. Թափանցիկ և հասանելի չեն վերակազմակերպվող դպրոցի ընտրության սկզբունքները, ինչպես նաև՝ համապատասխան որոշման մշակման գործընթացը և դրան հանրության մասնակցության եղանակները: Վերակազմակերպման ենթակա դպրոցները հնարավորություն չեն ունեցել շտկելու այն խնդիրները, որոնք հիմք են դարձել վերակազմակերպման գործընթացի համար:

5. Դպրոցների վերակազմակերպման որոշումների մեկ այլ խնդիր է դրանց հիմնավորվածությունը՝ սոցիալական արդարության տեսանկյունից: Ուսումնասիրված գրեթե բոլոր դեպքերում հարցվողներն այդ որոշումներն անարդար են համարում՝ մատնանշելով այլ ավելի քիչ սովորողներ ունեցող, սակայն չվերակազմակերպված դպրոցների օրինակները: